կռնակը տալիս է աւազին եւ սպասում։

Ինքնաշարժները դալիս են։

Տեղաւորւում ենք։ Քանի՛ տուփեր, դեղորայք մեծ մասամբ, քինին, քինին, քինին։ Fiat-ները իրաւ դեղեցիկ են, երկար, վայելուչ գծերով, ջղային եւ կանացի։ Խմբերի ենք բաժանւում, կատակ ենք անում, ու արեւը լուսաւոր շոյանքի նման տանիքների վրայ է իջնում եւ բլուրի կատարին ծառերի հետ տատանւում է։

Անցորդները զարմացած նայում են։ Համալսարանի առջեւ լեզուաբանական պրոֆեսորը նայում է ինձ եւ մտածում. «Դա՛ էլ ծախուեց բոլշեւիկներին»։

Նախանձը մեզ ճանապարհ է դնում։

Բայց փոշին ամէն ինչ ծածկում է։ Պրոֆեսորը մի կողմ է ցատկում եւ անմիջապէս փոքրանում է։ Նորքը վազում է դէպի մեզ եւ կաղամախների վրայից մեզմ դող է վազում։

Երեւանը իջնում է վար։ Փոքրանում է, տափականում։ Գլխատած իր տանիքները մէկը միւսի վրայ են ընկնում, հրմշտկում, սահում վար։ Երբեմն կանգ են առնում փայլելուն մի դմբէթի մօտ, մի քիչ բարձրանում են ու վիզը ծռում ծաղկած մի պարտէզի հմայող խաղաղութեան առջեւ. կամ արագօրէն, կոյտ-կոյտ, գլորւում են վար, փուլ գալիս կիսաքանդ պատերի կմախքացած ուրուագծերի կատարին, ծունկի իջնում կաւեխառն փոշիների մէջ եւ պարապ աչքերով նայում թրքաց մզկիթի յախճապակիէ պարտէզի գոյնզգոյն գարդերին։

Ոլոր զառիվերը ինքնաշարժի մզանակի տակ սեղմւում է. մեքենան աղմկալից շունչ է քաշում, պայթում, սարսռում. դեկը սեղմում է իր շղթաները, առջեւի անիւները վեր են ցատկում եւ, նետի նման անցնող մեր նայուածքների առջեւ, Արարատեան դաշտը պատռում է հորիզոնը եւ մի վայրկեան տարօրինակ ծովի նման երերում է։

Մինչ ճանապարհը բոլորում է իր հանդոյցը, Արարատը, անհանգիստօրէն, իր դէմքը սուզում է սրտերի մէջ։ Հեւում պառկած ծաղկաւէտ անդնդի միջից նա վեր է սլանում սպիտակ մենութեան նման, երկրից եւ երկնքից դուրս, եւ անմիջապէս անհետանում է։

Նորքը քամիի արագութեամբ յետ է քաշւում. մինչ պարտէզները դրոհ են տալիս դէպի Ծաղկաձոր։

Անշուշտ Քանաքեռից Աբովեանը դեռ շարունակում է դիտել։ Առաւօտեան այս ժամին դիւղը կանանչ աչքեր է բաց արել, նայում է բարձրացող լոյսին եւ փոշին։ Ինքնաշարժը զգուշօրէն անցնում է առաջի արագութեան։ Ճանապարհը փլած է եւ դեկը պատում է, ասես նաւարկում ենք անհանգիստ ծովի վրայ։

Քիչ յետոյ ամէն ինչ արագանում է։

Հովը թափահարում է ցուլի իր գլուխը։

* * *

— Հայաստանի դրեթէ բոլոր ճանապարհների վրայ դաշտանկարը պահուրտուք է խաղում։ Լեռը ցցւում է առջեւդ, թափ է տալիս իր պղնձէ մերկութիւնը ու թաքնւում է ուրիշ մի բարձրութեան ետեւ։

— Այո՛, պղնձէ մերկութիւն կամ աւելի շուտ ժանգոտած երկաթի աստիճանաւոր երկնաւորում։

— Անտառները մեկնել են...

— Կարծո՞ւմ էք։

— Ու մնացել է էականը։ Ինքը բիրտ, խստադէմ հողը, նախնական եւ խիստ այն լեզուն, որ գործ են ածում մարած հրաբուխները։ Մտածե՛լ, հազարամեակները ինչպիսի պայքար մղած են երկրի մակերեսի այդ կենդանի մսերի հետ. ի՞նչ դէմքեր՝ ծածկուած, յօշոտուած, ցաւագնօրէն կարկամուած, խոր իրենց կնճիռներով, ծալքերով ու վէրքերով։

— «Վէ՛րք Հայաստանի»։

— Տեսել է՞ք Ալպեան լեռները։ Երկրաբանականօրէն ի՞նչքան երիտասարդ են նրանք, թրթռուն, բիւրեղեայ իրենց գագաթներով, իսկ անդին՝ ոչ շատ հեռւում, ինչքան ծեր է Պիրենէան փլած շղթան՝ մաշուած, ծայրատուած, քերուած։ Ո՞վ կարողացել է լսել երկրաղնդի վրայից անցնող հողային հսկայ շերտերի ընթացքը, ահաւոր փլուզումների շառաչը, գրանիթէ կուտակումների աղմկալից վերելքը, տապալուող ձորերի վարէջքը, ծովերի փախուստը, եւ ո՞վ կարողացել է տեսնել ծովեղերքների մեկամաղձոտ մահը, ծովային աւազի տարածուող ամուլ պատմուճանը, անապատի առաջընթացութիւնը,

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան